1015 Իջել էր լուռ գիշեր այգիների վրա

Իջել էր լուռ գիշեր այգիների վրա
Միայն դու ես արթուն, մայր սիրելի
Շրթունքներիդ մեղմիկ աղոթքներով անձայն
Իմ անունն ես կանչում սրտիդ խորքից:

Փորձություններիս մեջ որքան անզոր էի
Բայց քո աղոթքն էր միշտ ինձ հետ,մայր իմ
Հաստատեցիր դու ինձ Տիրոջ եկեղեցում
Քո շնորհքով օրհնյալ, մայր իմ բարի:

Քո լուսե երեսի կնճիռները, մայր իմ
Տառապանքների հետքերն են կյանքիդ
Մայր իմ որքան եմ քեզ վիշտ ու ցավ պատճառել
Անհնազանդությամբ արցունքներ բերել:

Թույլ տուր ձեռքերը քո զղջումով համբուրեմ
Ճերմակած մազերդ քնքշորեն շոյեմ
Անկարող եմ որքան հատուցելու քեզ մայր
Թույլ տուր, որ քեզ գրկեմ խոնարհությամբ:

Թող շնորհի Աստված բոլոր մեր մայրերին
Մխիթարություն հորդ արցունքների
Թող, որ բոլոր մայրերն իրենց զավակներին
Տեսնեն եկեղեցում գրկում Հիսուսի: